ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության պետական մրցանակներ հիմնելու և շնորհելու կարգի մասին» ՆՀ-1164-Ն հրամանագիրը և հաշվի առնելով պետական մրցանակների հանձնախմբերի առաջարկությունները՝ ո ր ո շ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական մրցանակներ շնորհել.

1. Գրականության և արվեստի բնագավառում՝

1) գրականության և հրապարակախոսության ոլորտում՝ Հակոբ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ (Հակոբ ՄՈՎՍԵՍ)՝ «Յոթներորդ որսորդություն» բանաստեղծությունների ժողովածուի համար.

2) երաժշտության ոլորտում՝ Վարդան ԱՃԵՄՅԱՆԻՆ՝ «Հնչյունի թատրոն» լարային նվագախմբի, գոսերի և դաշնամուրի համար» ստեղծագործության համար.

3) կինոարվեստի ոլորտում՝ Վահե ԿԵՎՈՐԿՈՎԻՆ (ռեժիսոր), Սամվել ԲԱԲԱՍՅԱՆԻՆ (օպերատոր), Հայկ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ (օպերատոր), Աննա ԴԵՐՁԱԿՅԱՆԻՆ (սցենարի հեղինակ) և Արթուր ՓԱՐՍՅԱՆԻՆ (մոնտաժող)՝ «Արմենիա». ծովից ծով» վավերագրական ֆիլմի համար:

2. Ճարտարապետության և քաղաքաշինության բնագավառում՝ Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ (ճարտարապետ), Պոլ ՉԱԹԱԼԲԱՇՅԱՆԻՆ (կոնստրուկտոր) և Ստեփան ԱԽՈՅԱՆԻՆ («Սպիտակ Տնակ» ՍՊԸ-ի տնօրեն)՝ Երևանի Վազգեն Սարգսյան փողոցում կառուցված կառավարական վարչական համալիրի համար:

3. Ճշգրիտ և բնական գիտությունների բնագավառում՝ Աշոտ ՍԱՂՅԱՆԻՆ, Աննա ՄԿՐՏՉՅԱՆԻՆ և Հայարփի ՍԻՄՈՆՅԱՆԻՆ՝ «Նոր սերնդի ոչ սպիտակուցային ամինաթթուների արդյունավետ փոքրածավալ արտադրական տեխնոլոգիա» աշխատանքի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2015 թ. դեկտեմբերի 29
Երևան
ՆՀ- 898 -Ա